

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Եթէ ՃԻՇԴ Է

Եթէ ճիշդ է Աստուած իմ, որ Դու՛մ ըզմեզ համաձայն
Ըստեղծեցիր պատկերիդ. տըւիր հանոյքն իսկական
Սիրելու խոր, սիրունիւ՛ն. ըստեղծեցիր մե՛զ համար
Հարուստ դաշտե՛յն հանոյքի, եւ ըլնուրի՛նը փարթամ,

Եթէ նոյնիսկ վերջստին Քեզ գտնելու համա՛ր էր,
Որ մահն ըրիր առաքեալ անմահութեան ճամբուն վրայ,
Ու խոստացար արդարին հոգեխնկոյ՛ք անվախճան,
Երախտագէտ աղօթքներն՝ անբաւարար են շնորհիդ:

Բայց Դու՛ն դըրիր հրեւումնին դիմաց վշտի բազկաթոռն,
Եւ մեծ սիրոյ յանդիման՝ քէնքեր, ու կիրք ու ոնիր,
Ըրիր մէկ ձեռքը մերին առատաճեռն ու բարի,
Միւսն ալ՝ ժլատ, չարագործ: Խոնարհութեան ծայրագոյն՝

Դե՛մ կանգնեցիր նոյն հետայն հըպարտութեան արձաններ,
Ու սէրերու կողքին ալ՝ նախանձի օ՛ճը դըրիր.
Եւ հիւսուեցան վատ զարդեր մեր բարութեան գորգին մէջ:
Մինչ մեմք դարձանք կիրքերու հիւրասըրահ ահաւոր.

Դու՛ն անտարբեր վեհութեամբ աչքերդ մեծ փակեցիր:
Ա՞յս է Քու սէրդ անսահման: Եթէ մտքիդ՝ հայրական
Ծածկեալ խորհուրդ մը ունիս, շնորհէ՛ ինձ գէթ՝ այն ատեն
Անօրինակ կոյր հաւատք, որ անհարցում՝ Քե՛զ պաշտեմ:

ԱՆՆԸ,